ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

ԳՄԳՀ-ԳՀԱՊՁԲ-18/7 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ՀԻՄՆԱՎՈՐՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏ

ք.Գավառ «13» նոյեմբերի 2018թ.

ժամը 12:00-ին

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ՝ Ա.Բաղալյան

Հանձնաժողովի անդամներ՝ Կ.Մանուկյան, Ս.Խաչատրյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ս.Մելքոնյան

ԳՄԳՀ-ԳՀԱՊՁԲ-18/7 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի որակավորման պահանջները հիմնավորող փաստաթղթերը գնահատելու գնահատող հանձնաժողովի նիստի մասին

Ա.Բաղալյան

1) 06.11.2018 թվականին հայտերի բացման նիստում հաղթող ճանաչված մասնակից «ՆԱ-ԱՐ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ /Գործընկեր 1/ և «ՎԻՏԱԶ» ՍՊԸ /Գործընկեր 2/ կոնսորցիումը 12.11.2018 թվականին ներկայացրել են համապատասխան որակավորման փաստաթղթերը:

Համատեղ գործունեության պայմանագրում՝ «Պայմանագրի առարկա» բաժնում նշվել է յուրաքանչյուր կողմի ավանդների ներդրման պարտավորությունները: Այն է՝

«Գործընկեր 1» - Տեխնիկական միջոցներ, Ֆինանսական միջոցներ, Աշխատանքային ռեսուրսներ:

«Գործընկեր 2» - Մասնագիտական փորձառություն, շրջանառություն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

2) ՊԵԿ-ից հարցման կատարման հիման վրա պարզ է դարձել, որ «Գործընկեր 1» հանդիսացող «ՆԱ-ԱՐ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ը հայտը ներկայացնելու տարվան նախորդող երեք հաշվետու տարիների ընթացքում չի կատարել ոչ մի շրջանառություն և համախառն եկամտի հանրագումարը պակաս է իր ներկայացրած գնային առաջարկից, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Հարկային Ծառայության պաշտոնական կայքէջում /www.petekamutner.am/ նշված է, որ «ՆԱ-ԱՐ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ը գրանցվել և գործում է 02.11.2018 թվականից սկսած, որն էլ չի բավարարում Հրավերի փաթեթի 1-ին մասի 2.4 կետի 3-րդ ենթակետի պահանջները:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

3) Հիմք ընդունելով Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասը և «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 63-րդ կետի 1-ին մասի ա) պարբերությունը «ՆԱ-ԱՐ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ն /Գործընկեր 1/ չի բավարարում ԳՄԳՀ-ԳՀԱՊՁԲ-18/7 ծածկագրով հայտարարված մրցույթի գնանշման հարցման ընթացակարգի չափաբաժին 2 /լուսասյուն 3 լուսամփոփով/ սահմանված պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

1-ին չափաբաժնի /լուսասյուն 5 լուսամփոփով/ մասով ընտրված մասնակից ճանաչել «ՆԱ-ԱՐ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ և «ՎԻՏԱԶ» ՍՊԸ կոնսորցիումին:

2-րդ չափաբաժնի /լուսասյուն 3 լուսամփոփով/ մասով մերժել «ՆԱ-ԱՐ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ և «ՎԻՏԱԶ» ՍՊԸ կոնսորցիումին և առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Նիկոլ Դուման» ԱԿ-ին

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

4) 2-րդ չափաբաժնի /լուսասյուն 3 լուսամփոփով/ մասով «Նիկոլ Դուման» ԱԿ-ից սահմանված ժամկետներում պահանջել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացվող համապատասխան փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

3) Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ոչ ուշ, քան ՊԵԿ-ից տեղեկատվության ստացմանը հաջորդող աշխատանքային օրվանից հաշված երրորդ աշխատանքային օրվա ժամը 12:00-ին՝ ք.Գավառ, Գր.Լուսավորչի 12 երկրորդ հարկ, 8-րդ աշխատասենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ		
ՆԱԽԱԳԱՀ՝		Ա.ԲԱԴԱԼՅԱՆ
ԱՆԴԱՄՆԵՐ՝		Կ.ՄԱՆՈՒԿՅԱՆ
		Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝		Ս.ՄԵԼՔՈՆՅԱՆ